10054540

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 26

«25» 07 2013 թ.

Հ/Կ-1252

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ջավադյան,

Ձեր՝ 2013թ. հունիսի 11-ի թիվ 15.7-02/000502-13 գրության կապակցությամբ ուղարկում ենք «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

Հաշվի առնելով, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2013թ. հունիսի 19-ին, ստորագրվել է 2013թ. հուլիսի 13-ին) 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի համաձայն՝ 2014թ. հունվարի 1-ից հանվել են ԱՊՊԱ կտրոնները, առաջարկում ենք Նախագծից հանել ԱՊՊԱ կտրոններին վերաբերող հանցակազմերը:

Առաջարկում ենք նաև Նախագծի 3-րդ հոդվածի «Հոդված 204.3»-ի 1-ին կետում գործածված «գործակալական պայմանագիր» բառերը փոխարինել «գործակալության պայմանագիր» բառերով (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածը):

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. Թունյան

Կատարող՝ Ա. Գյոժգյան